



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«15» հոկտեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 9՝ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են համայնքի ավագանու տասնմեկ անդամներից՝ Արկաղի Գևորգյանը, Գայանե Մելքումյանը, Գասպար Բաղդասարյանը, Գարիկ Մկրտչյանը, Գրիշա Գևորգյանը, Զհար Սամսոնյանը, Էլլա Հայրապետյանը, Հուսիկ Գրիգորյանը, Նորայր Սանթրոսյանը, Նվեր Ղահրամանյանը, Վահագն Վարդանյանը:

Համայնքի ավագանու նիստն իրավագոր է, քանի որ նիստին մասնակցում են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Ռոբերտ Պետրոսյան:

Արձանագրող՝ Սուսաննա Թադևոսյան:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում են համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, «Զրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Էդգար Խոցանյանը, «Զորաղբյուրի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն Նվարդ Խաչատրյանը:

Համայնքի ղեկավար Ռոբերտ Պետրոսյանը ներկայացրեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:
3. Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 61-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի N 10-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
5. «Զորաղբյուրի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ):

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով,

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 9՝ հերթական նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 11
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

2.ԼՍԵՑԻՆ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ):

ԶԵԿՈՒՑԵՑ - Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Համայնքի ավագանու անդամ Նորայր Սանթրոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Ռոբերտ Պետրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով,

